Աղաչեմ զերջանիկ գաղափարողդ, որք օրինակէք զգիրս զայս, զսակաւ յիշատակս այսոցիկ գրեսջիք, զի գիտասցեն վերջինքն, թէ յումմէ գտեալ եղև։ Զի և դուք գրեսջիք ի գիր յաւիտենական կենացն զպրութեան, ամէն։ Եւ պարտ է գիտել, թէ զիարդ գտեալ եղև մեկնութիւն աւետարանիս։ Հարկեցին զմեզ եղբարքն զմեկնիչն տէր Իգնատիոսի դաս ասել։ Եւ մեք սկսաք ըստ տկարիմաց մտաց մերոց բան բան լուծանել. եւ տեսաք, զի ոչ էր առեալ զընագիրն ի ներս՝ ըստ կարգի մեկնութեան բանին մտաք և բանիւ, տրտնջէաք որպէս սովորութիւն մեր։ Եւ ի նոյն աւուրսն եկն եհաս տօն ծն(ն)ղեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Ելեալ գնացաք ի գեօղ մի կոչեցեալ Ասպիսակըն։ Մտաք յեկեղեցին և գտաք ի խորանին ձգեալ անպիտան ի մէջ մոխրակուտին։ Առեալ տեսաք և գոհացաք զԱստուծոյ, զի վասն առատաւուր պարգևացն և ձրի շնորհացն զհասարակաց զչահն և զօգուտն ոչ արգելէ ողորմած և մարդասէրն Աստուած ի յանարժան վարդապետաց։ Եւ վասն դառն և չար ժամանակիս թշուառութեան 8 ամ ի մէջ անցաւ. և ոչ կարացաք գրել։ Իսկ յորժամ բարերարն Աստուած սակաւ ինչ անդորրութիւն ետ, ի 876 թվականիս, կամօքն ա՞յ սակաւ ինչ ես գրեցի և զբոլորն գրել ետու հոգևոր որդոց իմոց Թովմայ գրագրի և Յովհաննէս դրոց աշակերտի։ Զոր և խնդրեմք ի Քրիստոսէ պահեալ զսոսա անփոխն և անսասան կենօք մինչ ի խորին ծերութիւն։ Եւ թողութիւն մեղացն արասցէ Քրիստոս Աստուած ծնօղաց նոցին և ամենայն արեան մերձաւորացն ի միասին։ Բայց սկիզբն անկեալ էր մինչև «յամենայն վեցերորդին». զնախերգան Իգնատիոսին եղի, եւ զյանդ խորանացն նոր եղի, զի դիւրագիւտ և առ ձեռն պատրաստ ուսումնասիրացն եղիցի։

Այլ սղալանացն անմեղադիր լինել աղաչեմ, զի էր ինչ, որ ջնջեալ էր և էր ինչ, որ գրիչն սխալեալ էր, զի 230 ամաց էր։ Եւ յոյժ աշխատութեամբ ի յաւարտ ածաք։ Իսկ դու, սուրբ եղբայր, զսխալն ուղղեա, զի և դու մասն բարեաց ի տեառնէ ընկալցիս և վիճակի սրբոցն ի լոյս արժանի լինիցիս հանդերձ ծնօղ(օ)ք և ամենայն արեան մերձաւորաք. ամէն եղիցի։

Այլ և զհոգևոր և զմարմնաւոր հարազատքն մեր զՄկրտիչ վարդապետն և տէր Յովհաննէս քահանայն և զ՞պրն Գօրգի մելիքն և զՅովհաննէս և զԱրիստակէս և զԱմիր մելիքն և զՍոլթանշա և զհայրն իմ զՍտեփաննոս և զմայրն իմ, զհանգուցեալքն ի քրիստոս, աղաչեմ յիշել ի տէր, և միով բանիւ ասել. Քրիստոս Աստուած, արձակեսցես զնոսա ի մեղաց կապանաց և ի բանադրութեան մեղանչական քնութեանց և ի